

ՊԱՇՏՊԱՆԻՐ ԵՐԵԽԱՅԻՂԻ ՄԻԱՎ-ԻՑ



Դու պարտաստիվում ես մայր դառնալ: Բոլոր ապագա մայրերի նման դու ևս ցանկանում ես առողջ երեխա ունենալ: Իսկ գիտե՞ս, որ կան որոշ հիվանդություններ, որոնցով վարակված հղիից վարակը կարող է փոխանցվել երեխային: Այդպիսի հիվանդություններից է ՄԻԱՎ վարակը: Ոչ հազվադեպ կանայք իմանում են իրենց մոտ ՄԻԱՎ վարակի առկայության մասին, երբ հղիության կապակցությամբ դիմում են կանանց կոնսուլտացիա: Մա չափազանց ծանր և պարասխանաբար պահ է կնոջ և նրա ընդհանրի անդամների համար: Բնականաբար ծագում են բազմաթիվ հարցեր: Այս փոքրիկ տեղեկարկական թերթիկում փորձել ենք պարզաբանել այն հարցերը, որոնք առավել հաճախ են հուզում հղի կանանց:



Արդեն երեք ամիս է, ինչ հղի եմ: Ես շարք երկար եմ սպասել դրան և ինձ չափազանց երջանիկ էի զգում: Կանանց կոնսուլտացիայի բժիշկն այլ հեղափոխությունների թվում առաջարկեց հեղափոխվել նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Ստացված արդյունքն առավել քան անսպասելի էր ինձ համար. ես վարակված եմ ՄԻԱՎ-ով: Չգիտեմ ինչ անել: Պահպանել, թե՛ ընդհատել հղիությունը: Արդյո՞ք նման դեպքում հնարավոր է ունենալ առողջ երեխա:

Հղի կնոջ մոտ ՄԻԱՎ վարակի ախտորոշումը դեռևս չի նշանակում, թե նրա երեխան անսպասման վարակվելու է ՄԻԱՎ-ով: Թեև գոյություն ունի վարակված մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վրանգ, սակայն որոշակի կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ հնարավոր է նվազագույնի հասցնել այդ վրանգը: Իմացի՞ր, որ ՄԻԱՎ-ով վարակված մայրերից ծնված երեխաների երկու երրորդը չի վարակվում, իսկ համապարասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացումը մոտ 98% դեպքերում քեզ առողջ երեխա ունենալու հնարավորություն կդա: Խորհրդակցի՞ր մասնագետ բժշկի հետ: Որոշակի հեղափոխությունների արդյունքները կկողմնորոշեն ճիշտ որոշում կայացնելու հղիությունը պահպանելու կամ ընդհատելու առնչությամբ: Ամեն դեպքում վերջնական որոշումը քոն է, ոչ ոք իրավունք չունի պարտադրել քեզ ընդհատելու հղիությունը:



Ինչպե՞ս կարող եմ անդրադառնալ հղիությունն ու ծննդաբերությունը ՄԻԱՎ վարակ ունեցող կնոջ առողջական վիճակի և ինքնազգացողության վրա:

Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ հղիությունը հիմնականում բացասաբար չի անդրադառնում ՄԻԱՎ վարակի ընթացքի վրա, չի արագացնում ՄԻԱՎ-ով վարակված կնոջ մոտ հիվանդության զարգացումը:

Ինչպե՞ս է երեխան վարակվում իր ՄԻԱՎ վարակ ունեցող մորից:

Երեխան կարող է վարակվել հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ և կրծքով կերակրվելիս: ՄԻԱՎ-ը կարող է պոդին փոխանցվել ութ շաբաթական հղիությունից սկսած, երբ ընկերը բորբոքված կամ վնասված է: Ծննդաբերության ժամանակ երեխան վարակվում է ծննդաբերական ուղիներով անցնելիս մոր արյան, հեշտոցային արտազատությունների հետ շփման կամ դրանք կոպ տալու միջոցով: Կրծքով կերակրվելիս երեխան կարող է վարակվել անմիջականորեն կրծքի կաթի միջոցով կամ պոդիների, հարպուրակային շրջանի մաշկի արյունահոսող վնասվածքներից մայրական արյուն կոպ տալու հետևանքով:



Ինչպե՞ս կարելի է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակված մորից երեխային վարակի փոխանցման հավանականությունը:



Դրա համար նախ անհրաժեշտ է, որ հղի կինն ամենայն ուշադրությամբ հետևի իր առողջությանը, ժամանակին բուժվի սեռավարակներից, ՄԻԱՎ վարակի ֆոնին առաջացած հիվանդություններից, ճիշտ սնվի, բավարար չափով քնի, հնարավորինս խուսափի սթրեսային իրավիճակներից, վարի առողջ ապրելակերպ: ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխայի վարակումը կանխելու ուղիներն են. հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ մոր կողմից հակառետրովիրուսային դեղերի ընդունումը, կեսարյան հաբման միջոցով ծննդալուծումը, ծնվելուն պես նորածնի հակառետրովիրուսային կանխարգելիչ բուժման անցկացումը, կրծքով կերակրելուց հրաժարումը: Մորից երեխային վարակի փոխանցումը կանխելու համար չափազանց կարևոր է հնարավորինս շուտ հայտնաբերել կնոջ մոտ ՄԻԱՎ վարակի առկայությունը և ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ: Ոստի հղիանալու ցանկություն ունեցող կամ հղիության կապակցությամբ առաջին անգամ կանանց կոնսուլտացիա դիմած կանանց խորհուրդ է տրվում անցնել հետազոտություն ՄԻԱՎ-ի վերաբերյալ:

Որպե՞ր կարելի է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու համար հարկավոր է դիմել ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն (ք.Երևան, Ավան, Աճառյան 2) կամ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդարվություն և հետազոտություն տրամադրող ցանկացած հաստատություն, մասնավորապես՝ կանանց կոնսուլտացիաներ: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունն անվճար է, ուղեկցվում է նախա- և հետթեստային խորհրդարվությամբ: Խորհրդարվություն կարելի է ստանալ նաև «Թեժ գիծ» հեռախոսային ծառայության միջոցով՝ 61-08-20, ամեն օր, բացի հանգստյան օրերից, ժամը 09.⁰⁰-18.⁰⁰:



ՄԻԱՎ (BHIV)՝ մարդու իմունային անբավարարության վիրուս
 ՉԻԱՀ (СПИД)՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ



© ՉԻԱՀ-ի Հայկական ազգային Հիմնադրամ
 Armenian National AIDS Foundation

Հրատարակված է ՉԻԱՀ-ի, գտբերկուրզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

Ենթակա չէ վաճառքի
 Not for sale